ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

Պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

sargsyansuren@yandex.ru

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ «ՓԻՆԻԿ» ԹԵՐԹՈՒՄ

Բանալի բառեր՝ ազգային-ազատագրական պայքար, հրապարակախոսություն, կուսակցություն, Հայկական հարց, գաղթաշխարհ, դիրքորոշում, Ազգային պատվիրակություն:

Ներածություն

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ ժողովրդի գերխնդիրը օսմանյան տիրապետությունից ազատագրվելն էր, այդ շրջանի հեղափոխական սերունդը պայքարի դաշտ նետվեց հիմնախնդիրը լուծելու: Այդ հերոսական սերնդի ներկայացուցիչներից մեկը հասարակական-քաղաքական և կուսակցական գործիչ, գրող, թարգմանիչ, մանկավարժ Միհրան Տամատյանն էր (1863–1945):

Պայքարի ընթացքում անխուսափելի դժվարություններից չընկրկելով՝ Մ. Տամատյանը կարողացավ իր նվիրական առաքելությանը ծառայել ամբողջապես: Պայքար, որի առաջին քայլերը միտված էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ հեծող հայությանը դարավոր ընդարմացումից դուրս բերելուն: Այնուհետև, զենքը ձեռքին, անվարան կռվում էր թուրքական ու քրդական հրոսակների դեմ: Միաժամանակ, գրչի հատու հարվածներով մերկացնում ու անարգանքի սյունին էր գամում օտար բռնակալներին ու հայ մեծահարուստներին, որոնք ազգային դիմագիծը կորցրած՝ հանուն փողի նույնպես կեղեքում էին հայ ժողովրդին:

Մ. Տամատյանի հրապարակումները, որոնք թեև ոչ միշտ են փայլում վերլուծական, գրական-գեղարվեստական բարձր մակարդակով, սակայն լավագույնս նպաստեցին հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը նոր

* *Հոդվածը ներկայացվել է 06.12.19, գրախոսվել է 06.12.19, ընդունվել է տպագրության 14.08.20:*

մակարդակի բարձրացնելու խիստ կարևոր գործին և ապահովեցին նրա տեղը հայ ազգային-ազատագրական պայքարի փաղանգում:

Մ. Տամատյանն էությամբ եռանդուն, պրպտող ու անհանգիստ բնավորություն ուներ: Ա. Արփիարյանի և այլ համախոհների հետ այն կարծիքին էր, որ XIX դ. վերջին միջնադարյան մակարդակի վրա գտնվող Օսմանյան կայսրության կազմում գոյատևող արևմտահայությունը հեռու էր սոցիալիստական գաղափարախոսությամբ առաջնորդվելուց: Բացառապես արևմտահայերից բաղկացած նրանց խումբն այդ հենքի վրա զատվեց Հնչակյան կուսակցությունից և հիմնեց առավել իրատեսական ծրագրով տոգորված Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը: Իսկ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո վերջիններս, միավորվելով նախկին արմենականների հետ, հիմնեցին Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը: Ավելի ուշ, Մ. Տամատյանի և իր գաղափարակիցների նախաձեռնությամբ 1921 թ. հիմնադրվեց Ռամկավար ազատական կուսակցությունը: Հետագա տարիներին էլ ազգային գործունեությանը զուգընթաց, Մ. Տամատյանն ակտիվ մասնակցություն ունեցավ այդ կուսակցությունների պաշտոնաթերթերի և համակիր պարբերականների ստեղծմանն ու արգասաբեր գործունեությանը: Դրանցից էին Եգիպտոսում լույս տեսնող «Փունիկ», «Արև-Լուսաբեր», «Արեւ», Բեյրութում հրատարակվող «Զարթօնք» և այլ թերթերը, որոնցում Մ. Տամատյանը մեծ թվով հոդվածներ է հեղինակել:

Հայ պատմագիտության մեջ ազգային-ազատագրական պայքարին Մ. Տամատյանի մասնակցության մասին թեև ժլատ, սակայն անդրադարձեր եղել են[1]: Ենթադրում ենք, որ նրան նվիրված դեռ շատ ուսումնասիրություններ կգրվեն: Սակայն նրա՝ գրչի մարդ լինելու, տարբեր պարբերականներում մեծաքանակ հրապարակումներ հեղինակելու իրողությունն ամբողջովին դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից:

Մեթոդ և նախադրույթներ

Հոդվածում, որն այդ բացը լրացնելու փորձ է, քննական մոտեցումներով ներկայացրել ենք Եգիպտոսում լույս տեսած **«Փունիկ» թերթում** Մ. Տամատյանի հեղինակած հրապարակումները, վերհանել դրանցում առկա տեսական-գաղափարական և հրապարակախոսական բնույթի հարցերը: Մատնանշել ենք դիվանագիտական դաշտում գոյություն ունեցող դավադիր դրսևորումնե-

[1] Այս դեպքում շահեկանորեն առանձնանում է Պ. Տեփոյանի աշխատությունը (Տեփոեան Պ. Միհրան Տամատեան (1863–1945), Պէյրութ, 1964):

րի և մեծ տարածում գտած անարդարությունների դեմ Տամատյանի բարձրացրած բողոքի ձայնը: Հեղափոխական-ազատագրական պայքարի բովով անցած աննկուն մարտիկը նույնքան ազնիվ ու անզիջում էր գաղափարախոսական դաշտում: Հնարավորինս հարազատ մնալով բնագրերի լեզվին և ոճին՝ խուսափել ենք դրանք թեմատիկ, ժամանակագրական կամ մեկ այլ հատկանիշով խմբավորելուց:

Չբացարձակացնելով Մ. Տամատյանի հեղինակած նյութերի նշանակությունը՝ ընդգծենք, որ դրանք կարևոր աղբյուր կարող են դառնալ իր ապրած ժամանակաշրջանն ու իրադարձությունները ճիշտ հասկանալու, պատմական իրողություններն ու գործիչներին անաչառ գնահատելու և ընդհանրապես հայ ազգային-ազատագրական պայքարի ռազմավարությունն ու մարտավարությունը, թույլ տված սխալներն ու վրիպումները, ինչպես նաև Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների վերաբերմունքը խորությամբ ըմբռնելու համար:

Իհարկե, մենք հեռու ենք այն մտքից, որ Մ. Տամատյանը տիրապետում էր լրագրության և քաղաքագիտության բոլոր նրբություններին և անսխալ ու անթերի հրապարակախոս էր: Պատմական իրադարձությունների ու գործիչների վերաբերյալ նրա գնահատականները զերծ չեն սուբյեկտիվիզմից ու կուսակցականությունից: Սակայն կարող ենք պնդել, որ Տամատյան հեղինակը հիմնականում անկեղծ է եղել և փորձել է հնարավորինս վեր կանգնել անձնական ու կուսակցական շահերից: Նրան հաջողվել է հասկանալի մատուցել նյութը, պարզաբանել իր առջև դրված խնդիրները և մատնացույց անել դրանց լուծման ուղիները: Մ. Տամատյանի հրապարակումներում հստակ երևում է հայ ժողովրդի ազատության գործին անմնացորդ նվիրված, փակուղային իրավիճակներում ելք գտնելու կարողություն ունեցող, անհրաժեշտության դեպքում վճռական որոշումներ կայացնող և հայրենիքի փրկության համար նույնիսկ սեփական կյանքը զոհաբերելուն պատրաստ իսկական հայորդու կերպարը:

XX դարի առաջին տասնամյակում եգիպտահայ գաղութում ավելի, քան երբևէ, **կարևորվել է մամուլի դերը:**

Սմբատ Բյուրատը՝ «Փիւնիկ» թերթի խմբագիր

Առաջին պարբերականը, որի էջերում հանդիպեցինք Մ. Տամատյանի հեղինակած հոդվածների, «ազգային, գրական և քաղաքական» «Փիւնիկ» երկշաբաթաթերթն է, որը լույս է տեսել 1899 թ. Եգիպտոսի Կահիրե, իսկ 1901–1903 թթ. Ալեքսանդրիա քաղաքներում: Պարբերականը բարձրացրել է հայ

ժողովրդին հուզող բազմաթիվ խնդիրներ, որոնցից կարևորագույնը թուրքական բռնատիրությունից հայրենիքի ազատագրության հիմնահարցն էր: Խմբագիրն էր ականավոր մտավորական, լայնախոհ հրապարակախոս, մանկավարժ, հասարակական գործիչ Սմբատ Բյուրատը (Տեր-Ղազարյանց): Ս. Բյուրատի կյանքին ու գործունեությանը հայ պատմագիտությունը, փոքրիկ հիշատակություններից բացի, գրեթե չի անդրադարձել[2]: Մի կերպ փրկվելով 1896 թ. հայկական կոտորածներից՝ Ս. Բյուրատն ընտանիքի հետ ապաստան է գտնում Եգիպտոսում: Հայության ճակատագրով խիստ մտահոգ մտավորականն այստեղ ծավալում է քարոզչական-կազմակերպչական գործունեություն: Կահիրեում և Ալեքսանդրիայում հրատարակում է «Փունիկ», 1900 թ.՝ «Նոր օր» թերթերը, 1905 թ.՝ «Սիսուան» ամսագիրը: 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսի հայ մտավորականների հետ (թվով՝ 800 հոգի) Ս. Բյուրատը կալանավորվում է և բարբարոսաբար սպանվում:

Միհրան Տամատյանը՝ «Փունիկի» աշխատակից

Մ. Տամատյանը բավական ակտիվորեն աշխատակցել է «Փունիկին» և հոդվածներ հրապարակել հայ ժողովրդի ծանր վիճակի, դրանից դուրս գալու ուղիների, ինչպես նաև հայ աշխատավոր զանգվածների անմարդկային շահագործման և այլ իրողությունների մասին: Թերթի անվանումը և ճակատին պատկերված փյունիկ թռչունի պատկերը խորհրդանշում էին թերթի հիմնական նպատակը. «Վառ պահել Մայր Հայրենիքի վերականգնման յոյսը, ցրուած, վիատ ու ջախջախ բեկորները մօտեցնել, նոր ոյժ կազմել… ահա այս է մեր նպատակը»[3]:

«Փյունիկին» աշխատակցում էին հայ նշանավոր մտավորականներ Երվանդ Օտյանը, Միհրան Գալայանը, Շավարշ Հովիվյանը, Մարի Պեյլերյանը և ուրիշներ: Թերթի խմբագրական և հրապարակախոսական հոդվածների մեծ մասը պատկանում է Ս. Բյուրատի գրչին: XX դ. սկզբին Օսմանյան կայսրությունում շարունակում էին բոլոր առումներով ոտնահարվել հայ ժողովրդի իրավունքներն ու արժանապատվությունը: Չկարողանալով մնալ անտարբեր դիտողի դերում և ծառանալով այդ աղաղակող անարդարությունների դեմ՝ Մ. Տամատյանը և եգիպտահայ մտավորականները տարբեր միջոցներով բարձ-

[2] Միակ բացառությունը, թերևս, «Հայ պարբերական մամուլի պատմության» երկրորդ հատորում տեղ գտած մի քանի էջանոց հոդվածն է, տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն 2017, 343–347:

[3] Փունիկ, 1899, թիւ 1:

ռացնում էին իրենց բողոքի ձայնը, դիմում-աղերսագրեր ուղարկում եվրոպական երկրներ, առաջադեմ գործիչներին, հրավիրում էին հանրահավաքներ, պահանջում վերջ տալ բռնություններին և իրականացնել Բեռլինի վեհաժողովում ընդունված 61-րդ հոդվածի բարենորոգումների ծրագիրը: Բնականաբար, այդ ամենն իր արտացոլումն էր գտնում թերթի էջերում:

Նրանք օգտագործում էին հայ առաջադեմ մտավորականների՝ զենքի ուժով պայքարի ոգեկոչող գաղափարները և հայությանը զենքի դիմելու կոչեր էին հնչեցնում, քանի որ «հայերը լոկ դիւանագիտութեան վրայ դրած են իրենց յոյսը: Դիւանագիտութիւնը իրենց թշնամին է»[4]: «Փիւնիկի» ժողովրդավար-ազատական ուղղության մասին են վկայում ինչպես Սմբատ Բյուրատի, Մարի Պեյլերյանի, Երվանդ Օտյանի, այնպես էլ Միհրան Տամատյանի հրապարակախոսական հոդվածները, որոնք նվիրված են հայրենիքի ազատագրման և աշխատավորության շահերի ու իրավունքների պաշտպանության հարցերին: Դրանցում արծարծվում է այն գաղափարը, որ ռամիկ մարդն է ի վերջո փրկելու հայրենիքը և նա էլ պետք է լինի «վերջին յաւիտենական յաղթողը»:

Սահմանադրության գործադրման հիմնահարցը

Մյուս կարևոր հիմնախնդիրը, որին պարբերաբար անդրադարձել է Մ. Տամատյանը, սահմանադրության գործադրման հարցն էր: Մի շարք հրապարակումներում հաճախ դիմելով պատմությանն ու աշխարհի զարգացած երկրների փորձին՝ նա հայության համար ևս բարձրացնում էր օրենքների կիրառման, կարգ ու կանոնի հաստատման պահանջներ: Սխալ համարելով այն արմատացած կարծիքը, թե ազգի վարչական գործերը պետք է վստահել տիտղոսավոր ու հարուստ մարդկանց՝ Մ. Տամատյան առաջարկում է վերջ տալ նրանց «տիրապետութեանը»: Այս գաղափարները դուր չէին գալիս հայ մեծահարուստներին, և հալածանքների շարան է սկսվում է թերթի նկատմամբ: Ս. Բյուրատն ստիպված է լինում դադարեցնել «Փիւնիկի» տպագրությունը և տեղափոխվել Ալեքսանդրիա: Այստեղ ևս շարունակվում է պայքարը, որը թեժանում է հատկապես թաղային խորհրդի ընտրությունների ժամանակ:

1902 թ. մարտի 23-ին Ալեքսանդրիայում տեղի ունեցած թաղային խորհրդի ընտրություններն ավարտվում են սահմանադրականների հաղթանակով: Սակայն այդ հաղթանակի շնորհիվ ստեղծված խորհուրդը կարճ կյանք է

[4] Փիւնիկ, 1901, 19 հոկտեմբերի:

ունենում: Ատենապետ ընտրված Պողոս Նուբար փաշան լուծարում է թաղային խորհուրդը և դրա փոխարեն կազմում է նոր անդամներից բաղկացած մարմին՝ խնամակալություն, որին ժողովուրդը դեմ էր: Սահմանադրության գործադրման պահանջով Ալեքսանդրիայում կազմակերպվում են բողոքի ցույցեր: Առավել հայտնի է 1902 թ. հունիսի 23-ին Պիրամիդ թատրոնում հրավիրված համահավաքը, որտեղ ելույթներով հանդես են գալիս Մ. Տամատյանը, Ե. Օտյանը, Ս. Բյուրատը: Այդ ելույթների տեքստերը տպագրվում են թերթում: Բարձր է գնահատվում հատկապես Մ. Տամատյանի ելույթը. «Անոնց ամէն մի բառը սլաքի պէս կցցուէր խնամակալութեան կուշտին և անոր ապուշ փաստաբաններուն գանկին»[5]: Շարունակելով Եգիպտոսում սահմանադրական նորմերի կիրառման վերաբերյալ բանավեճը տեղի հայ ամիրաների գաղափարախոսների հետ՝ Մ. Տամատյանը ևս մեկ ծավալուն հոդված-պատասխան է հրապարակել Տ. Մկրտչյանի դեմ: Տամատյանը նշում է. «Թաղ. Խորհուրդն օրէնքով կազմուած չէ, այլ փաշայական կամքով. օրէնքով չկազմուող մարմին մը օրէնքով առժամեայ չի կրնար ըլլալ»[6], հետևաբար՝ այն ինքնակազմ է:

Մ. Տամատյանը համոզված շեշտում է, որ սահմանադրությունը կեղծ ու պատիր հանգամանք է, և եթե կայսրության որևէ մասում այն թվացյալ գործում է, ապա «*Աղեքսանդրիոյ մէջ սահմանադրութիւնը բռնաբարուած է*»[7] (ընդգծումը Տամատյանինն է):

Շարունակելով թեման՝ Մ. Տամատյանը քննադատում է «Արշալոյս» թերթի (N 220, 1901, 12 հոկտեմբերի) «Նիլ» հավելվածում տպված հոդվածը. «հրապարակ նետուած նոր Յաւելուածն ալ», որով պիտի «ան շարունակէ ստութեան խախուտ կռուանին վրայ մնալ»[8]: Հավելվածը, բացատրում է Մ. Տամատյանը, մեր հոդվածներին, որոնք կետ առ կետ հերքումներ էին, ուղղակի պատասխան չէ: Դրա ամենածավալուն հատվածը վերաբերում է Սահմանադրությունը գործադրելու խնդրին, ամբողջովին միտված է խեղաթյուրելու աշխարհածանոթ իրողությունը և ընդամենը խեղաթյուրումների, ստերի և հակասությունների «անճոռնի խորհուրդ մ'է, անպատկառ իմաստակութեան գլուխ գործոցը»[9]:

---

[5] Փունիկ, 1902, թիւ 2:
[6] Փունիկ, 1901, 12 հոկտեմբերի:
[7] Փունիկ, 1901, 12 հոկտեմբերի:
[8] Փունիկ, 1901, 2 նոյեմբերի:
[9] Փունիկ, 1901, 2 նոյեմբերի:

Մ. Տամատյանը գրում է, որ իրականությունը պարզ դարձնելու համար իրենք պահանջել էին հրապարակել թաղային խորհրդի նիստի արձանագրությունը, որը մերժվել էր: Իսկ ինչ վերաբերում է այն մեղադրանքին, որ ինքն արձանագրության վերլուծությունն արել է ենթադրություններով, իրականությանը չի համապատասխանում, քանի որ դա արվել է «մէկէ աւելի իրազեկ անձերու հարազատ պատմութենէն»[10]:

Այնպես որ, ամփոփում է Մ. Տամատյանը, անկախ այն բանից, թե ընդդիմախոսներն ինչպես կներկայացնեն խնդիրը, թաղային խորհրդի ատենապետ Պ. Նուբարն ավելի խոհեմ գտնվեց և հայտարարեց՝ քանի որ ժողովը մի շարք անդամների հրաժարականների պատճառով կորցրել է իր մեծամասնությունը, իրեն հայտարարում է ինքնալուծարված:

Համայնքային խնդիրներ

XIX և XX դդ. սահմանագծին «Փիւնիկ» թերթի շուրջ համախմբված, եգիպտահայ ազատախոհ մտավորականության մեջ Մ. Տամատյանն առանձնանում էր իր հոդվածներով, որոնք վերաբերում էին ներհամայնքային խնդիրներին, այլ քաղաքական կազմակերպությունների հետ գաղափարական ներհակություններին, ինչպես նաև ազգային-ազատագրական պայքարին ու հայ ժողովրդի ապագային:

Յուրաքանչյուր ժողովրդի մեջ էլ, գրում է Մ. Տամատյանը «**Հրապարակային ստախոսություն»** հոդվածում, կան միապետական գաղափարների հետևորդներ, որոնք կարծում են, թե իրավունք ունեն հասարակության գործերը վարելու բացարձակապես իրենց ուզած եղանակով, առանց կարևորություն տալու ժողովրդի պահանջներին: Այդպիսի մարդկանց համար սահմանադրությունը և ժողովրդական ընտրություններն ավելորդ բաներ են: Իսկ երբ այդպիսի պայմանավորվածությունները ժողովուրդը դժկամությամբ է ընդունում, շատերը առիթը ներկայանալու դեպքում չեն վարանում այդ նոր՝ իրենց համար օտարոտի սկզբունքները ոտնակոխ անել: Որովհետև իրենց ըմբռնումով՝ «ազգային օրէնքը իրենց կամքէն կը բղխի և անոր ստորադաս է»[11], սահմանադրությունը նրանց կողմից ժողովրդի վրա դրված պարտականություններ են, ընտրությունները միայն իրենց ձեռքով կարող են կատարվել: Հասարակ ժողովուրդն էլ հասու չէ իրենց նման «բարձրակարգ» անձնավորությունների օգտին քվե տալու:

[10] Փիւնիկ, 1901, 2 նոյեմբերի:
[11] Փիւնիկ, 1901, 17 օգոստոսի:

Մ. Տամատյանը կարծում է, որ աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչներն էլ պարտավոր են բոլոր պարագաներում ժողովրդի իրավունքները պաշտպանել և թույլ չտալ, որ միապետական օրենքներով վարեն ազգային գործերը և իրենց կամքը փաթաթեն ժողովրդի վզին: Ամիրայական մտածողություն ունեցող անձինք այնքան վնասակար չեն ժողովրդի համար, պարզաբանում է հոդվածագիրը, որքան այնպիսիները, որոնք առերևույթ իրենց ներկայացնում են առաջադիմական, ժողովրդավարական սկզբունքներ դավանող և հանդես են գալիս իբրև ժողովրդի իրավունքների պաշտպան, մինչդեռ իրականում ծառայում են միապետական գաղափարախոսությանը, աշխատում են արդարացնել նրանց: Այսպիսիներին հաջողվում է խաբել ժողովրդին, քանի որ նրանք՝ իբրև հասարակության շարքային անդամներ, թափանցում են ժողովրդի շարքերը, հրապուրում են նրան և օգտվելով վերջինիս տգիտությունից՝ խեղաթյուրում են իրականությունը, սուտն իբրև ճշմարտություն են մատուցում: Դրանց թակարդի մեջ, «դժբաղդաբար շատ կիյնայ միամիտ ժողովուրդը եւ ինքն իր ձեռքով կը փորէ իր կորուստի փոսը»[12]: Այնպես որ, «այդպիսի կեղծ ժողովրդասէրները շատ աւելի վնասակար են քան սկզբունքով ու համոզումով միապետական եղողները»[13], գրում է Մ. Տամատյանը

Այնուհետև Մ. Տամատյանը գրում է, որ միապետականներն «Արշալոյսում» տպագրած «Սահմանադրութեան պաշտպանները» հոդվածով ոտքի են ելել՝ խեղդելու ազգային սահմանադրությունն առանց հապաղելու գործադրելու մասին Ալեքսանդրիայի հասարակության բարձրացրած օրինավոր պահանջը: Նրանց անբարո պահվածքին ու խաբեություններին ու հոդվածին, Մ. Տամատյանի կարծիքով, «կարելի է իրաւամբ *հրապարակային սպախօսութիւն* անունը տալ» (ընդգծումը Մ. Տամատյանին է): Քանի որ այդ հոդվածով ժողովրդի բարեկամի, օրենքի պաշտպանի դիմակով անպատկառորեն գալիս են հայտարարելու, թե սահմանադրությունը Ալեքսանդրիայում «բռնաբարուած չէ»[14]:

Մ. Տամատյանը մանրամասնում է խնդիրը և ցույց տալիս ամիրաների կեղծ ու ստոր պահվածքը՝ նրանց մեջ առանձնացնելով միայն Պողոս Նուբա-

[12] Փիւնիկ, 1901, 17 օգոստոսի:
[13] Փիւնիկ, 1901, 17 օգոստոսի:
[14] Փիւնիկ, 1901, 17 օգոստոսի:

ին[15]: Մ. Տամատյանն ամփոփում է. ժամանակն է, որ ժողովուրդը զգուշանա ու չխաբվի «ճիւաղութեան և մաքիավէլեան պահվածքէ մը»[16]:

Որպես լիարժեք համաձայնության նշան Մ. Տամատյանի հոդվածի՝ թերթի խմբագրությունը պարզաբանում է. «Բարեհամբաւ ազգային գործիչ ու հայրենի բանաստեղծ Միհրան Տամատեանի յօդուածը, կը հարկադրէ զմեզ այս օրուան թիւէն դուրս ձգել տեղական ու քաղաքական լուրերու բոլոր բաժինները»[17] և ներողություն է խնդրում իր ընթերցողներից[18]:

Ժողովրդի և օրինականության մասին մտահոգ, սահմանադրության գործարկման անհրաժեշտությունը կարևորող և դրա կիրառման համար մաքառող Մ. Տամատյանը, չվախենալով տեղի մեծահարուստների սպառնալիքներից, շարունակում էր մամուլում հանդես գալ և համաքաղաքացիներին բացատրել, որ «խնդիրը պարզապէս Թաղական Խորհուրդ մ'ընտրելու գործը չէ»[19], այլ մի խորքային իրողություն, երբ յուրաքանչյուրի բռնած դիրքից կախում ունեն ազգային կենսական շահերը:

«Փիւնիկի» ընթերցողները գիտեն, պարզաբանում էր հոդվածագիրը, որ իրենց պայքարի նպատակը եղել է օրենքով «ձեռք բերել կամայականութեանց բարձումը, բռնաբարուած օրէնքին գործադրութիւնը» տեղական ազգային գործերում: Այս օրինավոր նպատակը, որ ամեն հայի բաղձանքն էր, հանդիպեց բուռն դիմադրության: Իշխանության մաս կազմողներն իրենց դիրքերը պահելու համար դիմում էին ամեն տեսակ ստոր միջոցների, արհամարհում ժողովրդին և սպառնալիքներ տեղում նրա հասցեին: Սակայն սահմանադրության պաշտպանները կարողացան մնալ իրենց բարձրության վրա, նշում է Մ. Տամատյանը, նշավակեցին հակառակորդների կեղծիքներն ու ապօրինությունները, լռեցրին նրանց, որոնք, սակայն, զինաթափ չեղան, այլ սկսեցին շարունակել իրենց սև գործը: Այնպես որ, բացատրում էր Մ. Տամատյանը, ժողովրդի խնդիրն է նախկին հակասահմանադրականի փոխարեն ընտրել նոր սահմանադրական թաղային խորհուրդ[20]: Այս ամենը պարզելով, գրում է Մ. Տամատյանը, «կը բաւականանամ ժողովուրդը հրաւիրել որ աչքը

---

[15] Փիւնիկ, 1901, 17 օգոստոսի:

[16] Փիւնիկ, 1901, 17 օգոստոսի:

[17] Փիւնիկ, 1901, 17 օգոստոսի:

[18] Տե՛ս նաև «Անպատկառ իմաստակութեան գլուխ գործոցը». Փիւնիկ, 1901, 19 սեպտեմբերի:

[19] Փիւնիկ, 1902, 12 մարտի:

[20] Փիւնիկ, 1902, 12 մարտի:

բանայ ու չի խաբուի»[21]: Ամեն մարդ պետք է որոշակի եզրակացության հանգի և հետո միայն իր ձայնը տա որևէ թեկնածուի օգտին: Սրանով միայն յուրաքանչյուրը կատարած կլինի իր քաղաքացիական պարտքը:

Անդրադարձներ Հայկական հարցին

Հայ ժողովրդի ապագայով մտահոգ Մ. Տամատյանը հաճախ անդրադարձել է նաև Հայկական հարցին և ամեն անգամ, երբ որևէ նորություն է նկատել մամուլում, արտահայտել է իր տեսակետները խնդրի վերաբերյալ: Նրա հոդվածները հատկանշվում են նյութի խոր իմացությամբ և իրատեսական մոտեցումներով: «Վերջապէս ծայր տալ կ'սկսի մեր ամենասուրբ յոյսերուն արշալոյսը՝ Հայկական Հարցը», ոգևորված գրում է նա՝ ներկայացնելով հարցի ծագումնաբանությունը: XIX դ. վերջին քառորդին աստիճանաբար հասունացող այդ հարցը, գրում է նա, որը Սան-Ստեֆանոյի պայմանագրով ու Բեռլինի վեհաժողովում արդեն դարձել էր միջազգային դիվանագիտության խնդիր,[22] գործնական փուլ է մտնում:

Ֆրանսիայի արտգործնախարարը, գրում է Մ. Տամատյանը, «Հայկական Հարցին գոհացուցիչ լուծում մը տալու պատեհ ժամը հասած նկատելով»[23] եվրոպական երկրներիին շրջաբերականներ է ուղարկել, որը հայերի երակներում «սփոփարար սարսուռ մը կը հոսեցնեն»: Մեր դավանանքը, Մ. Տամատյանի կարծիքով, արտասահմանի հայության մեջ հայրենիքի գաղափարը միշտ վառ պահելն է, իսկ դրա համար հարկավոր է «Փիւնիկի» ընթերցողներին Հայկական հարցին և քաղաքական բոլոր իրադարձություններին ծանոթացնել: Եվ որպես ասվածի հաստատում՝ ներկայացնում է. «Երեկուանէ չէ որ Հայերը խորհած են ընդվզիլ թրքական հարստահարութեան դէմ, Արեւելքի Հայկ. Նահանգներում է որ խիստ զգալի կ'ըլլան թրքական վարչութեան թերութիւնները»[24] տեղեկությունը:

Ռուսների դեպի տաք ջրեր ձգտումը և հայերի տառապանքներն էին պատճառը, որ արդեն 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ Ռուսաստանը, որ տեղյակ էր այդ ամենին, ստանձնեց նրանց շահերը պաշտպանելու գործը, և նրա ջանքերով էլ Սան-Ստեֆանոյի դաշնագրում տեղ գտավ հայերի վերաբերյալ 16-րդ հոդվածը, որը, ի նպաստ Հայաստանի, եվ-

[21] Փիւնիկ, 1902, 12 մարտի:
[22] Փիւնիկ, 1901, 28 սեպտեմբերի:
[23] Փիւնիկ, 1901, 28 սեպտեմբերի:
[24] Փիւնիկ, 1901, 28 սեպտեմբերի:

րոպական միջամտության առաջին դրվագը եղավ: Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով եվրոպական վեց մեծ տերություններն իրենց երաշխավորության տակ առան բարենորոգումների ծրագիրը: Այդ պահից, արձանագրում է Մ. Տամատյանը, Հայկական հարցը դադարեց լինել ներքին խնդիր և դարձավ միջազգային հարց, «**բայց անկից ծագեցաւ նաեւ մեր մեծ Աղէտքը**»[25] (ընդգծումը Տամատյանինն է):

Սուլթանը յուրովի էր ըմբռնել հիմնախնդիրը և «խորհեցաւ լուծել մեր հարցը, Հայերը բնաջինջ ընելով»[26]: Հայության վիճակն այն աստիճան վատթարացավ, գրում է հոդվածագիրը, որ «ստիպուած դիմեցինք, գերագոյն վսեմ միջոցին՝ Յեղափոխութեան»[27]: Մի շարք ցույցերից ու ռազմական գործողություններից հետո Եվրոպայի միջամտությամբ 1895 թ. մայիսի 11-ին սուլթանին ներկայացվեց նոր բարենորոգումների ծրագիր: Աբդուլ Համիդն ի վերջո 1895 թ. հոկտեմբերին ընդունեց դրանք՝ այս անգամ ևս իր ըմբռնած եղանակով՝ ջարդեր կազմակերպելով:

1895 թ. Գում Գափուի ցույցը, 1896 թ. Զեյթունի ապստամբությունն ու 1896 թ. օսմանյան բանկի գրավումը, որոնք հայերի բողոքի գործնական արտահայտություններն էին, հիմնականում մնացին անարձագանք: Միայն ցարի հրամանով դեսպան Մ. Նելիդովը 1896 թ. սուլթանին նոտա հղեց և պահանջեց «անյապաղ եւ առանց թագուն դիտումի գործադրելու խոստացուած բարենորոգումները»[28]: Սակայն սուլթանը անդրդվելի մնաց և բազմապատկեց Համիդիե գնդերի թվաքանակը, պաշտոնյաների խստությունները՝ դրանով ծաղրելով ողջ Եվրոպային: Իսկ մենք, ասելիքը եզրափակում է Մ. Տամատյանը, «կը սիրենք յուսալ թէ՝ կարգադրութիւն մը պիտի ըլլայ, արգիլելու համար ջարդերը»[29], բարենորոգումներ կատարել և դյուրացնել գաղթականների վերադարձը հայրենիք:

Եզրակացություններ

1. Մ. Տամատյանը «Փիւնիկ» թերթում հեղինակել է մեծ թվով հրապարակախոսական հոդվածներ:

---

[25] Փիւնիկ, 1901, 28 սեպտեմբերի:

[26] Փիւնիկ, 1901, 28 սեպտեմբերի:

[27] Հեղափոխությունն այս դեպքում պետք չէ ընկալել դասական իմաստով, այլ ընդամենը որպես ազգային-ազատագրական պայքար:

[28] Փիւնիկ, 1901, 28 սեպտեմբերի:

[29] Փիւնիկ, 1901, 28 սեպտեմբերի:

2. Դրանք երբեմն հարցերին ոչ խորքային մոտեցումներով, քաղաքագիտության ու հրապարակախոսության տեսանկյունից կաղում են, սակայն անկեղծ են, համարձակ ու յուրակերպ մարտահրավեր են ընդդեմ օտարի տիրապետության:

3. Այդ հոդվածներում հայության թշնամիների դեմ անթաքույց կոչ-հորդոր կա, սեր՝ տարաբախտ հայրենիքի հանդեպ և որոշակի լավատեսություն ապագայի նկատմամբ:

4. Մ. Տամատյանի հրապարակախոսությունը բազմավեկտոր է. Հայկական հարց, ազատագրական պայքար, գաղթաշխարհ և այլն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922 թթ. 2017, հ. 2, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 343–347:

Հայկ-Լևոն 1899, Լեռնականի մը ծոցատետրը (հուշագրությունը, Փյունիկ, N 1–14):

Տեփոեան Պ. 1964, Միհրան Տամատեան (1863–1945), Պէյրութ, հրատ. նշված չէ, 240 էջ:

Փիւնիկ, 1901, 19 հոկտեմբերի:

Փիւնիկ, 1901, 9 նոյեմբերի:

Փիւնիկ, 1901, 17 օգոստոսի:

Փիւնիկ, 1901, 19 սեպտեմբերի:

Փիւնիկ, 1901, 28 սեպտեմբերի:

Փիւնիկ, 1901, 12 հոկտեմբերի:

Փիւնիկ, 1901, 2 նոյեմբերի:

Փիւնիկ, 1901, 16 նոյեմբերի:

Փիւնիկ, 1902, 27 հունիսի:

Փիւնիկ, 1902, 12 մարտի:

ПУБЛИЦИСТИКА МИГРАНА ТАМАТЯНА НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ «ПЮНИК»

САРГСЯН С.

Резюме

Ключевые слова: национально-освободительная борьба, публицистика, партия, Армянский вопрос, диаспора, позиция, национальная делегация.

В конце XIX – начале XX в. жизненно важной для армянского народа задачей было освобождение от турецкого господства. На этом историческом отрезке революционно настроенное поколение встало на борьбу с турецкой тиранией. Одним из ярких представителей этой революционной когорты был общественно-политический и партийный деятель, писатель, переводчик и педагог Мигран Таматян. Против османской деспотии М. Таматян боролся методами пропагандистской и вооруженной борьбы. Решению вопроса освобождения армянского народа от турецкого господства и сохранению армянской идентичности способствовали и публицистические статьи Таматяна, изданные в египетской армяноязычной газете «Пюник».

MIHRAN TAMATYAN'S PUBLICATIONS IN THE NEWSPAPER "PYUNIK"

SARGSYAN S.

Summary

Key words: national liberation movement, journalism, party, Armenian question, diaspora, position, national delegations.

At the end of the 19th and the beginning of the 20th centuries the supreme task of the Armenian people was to be liberated from the Turkish dominance. In that historical period the generation, that was predisposed to revolution initiated a fight against the Turkish tyranny. One of the outstanding representatives of the revolutionary cohort was a public, political and party figure Mihran Tamatyan. Resorting to propaganda or armed struggle, Mihran Tamatyan fought against the Turkish despotism. Tamatyan's publicistic articles in the Egyptian-Armenian "Pyunik" newspaper contributed greatly to resolving the issue of the Armenians' liberation from Turkey's tyranny and preservation of the Armenian identity.